ԳԼՈՒԽ 2

ՌԱՑԻՈՆԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԱՑԻՈՆԱԼ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

§3 ՌԱՑԻՈՆԱԼ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ ԵՎ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Կարողություն, հմտություն

1. ա. $\frac{5x-7}{2}-\frac{16x+1}{7}=0$, բ. $\frac{1-9x}{5}-\frac{6x+3}{11}=1$,

գ. $\frac{6x+7}{7}+\frac{3-5x}{8}=3$, դ. $9-\frac{3x-1}{2}-\frac{6x+3}{11}=1$,

ե. $\frac{x-4}{5}-\frac{41-2x}{9}=9$, զ. $17{,}1+\frac{x+15}{7}+\frac{2x-6}{4}=8{,}1$:

Լուծում: բ. $\frac{1-9x}{5}-\frac{6x+3}{11}=1,\ 11(1-9x)-5(6x+3)=1\cdot 5\cdot 11,$

$11-99x-30x-15=55,\ -4-129x=55,\ -129x=59,$

$x=-59/129$:

Կիրառում, մոդելավորում

2. a կգ կարագը արժեր այնքան, որքան արժեր b կգ պանիրը: Որոշեք կարագի գինը, եթե պանրի գինն է՝ 1 կգ c-ը դրամ:
3. Վարորդը պետք է ժամը 9-ին շարժվեր և, հավասարաչափ շարժվելով, ժամը 14-ին լիներ նշանակված վայրում, եթե ժամում անցներ 63 կմ: Բայց նա կես ժամ ուշ դուրս եկավ և հավասարաչափ շարժվելով՝ ժամը 14-ին հասավ նշանակված վայր: Ինչ արագությամբ շարժվեց վարորդը:
4. Քանի՞ անգամ է աշխարհի ամենաբարձրահասակ մարդը երկար ամենացածրահասակ մարդուց:

5*. Քանի՞ անգամ է Յուրի Վարդանյանի բարձրացրած ամենածանր ծանրաձողը ավելի ծանր Սերգո Համբարձումյանի բարձրացրած ամենածանր ծանրաձողից:

6*. Քանի՞ անգամ է Մեծ Հայքի տարածքը ավելի մեծ, քան Հայաստանի Հանրապետության, Արցախի ու Ջավախքի տարածքների գումարը: